2000, ՀՈՒՆԻՍ Բ, ԹԻՎ 12 (80)

Քրիստոնեայ Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ, ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԹԵՐԹ

Ոքսի տեսարան. Սպիտակավոր. 14-դդ դար

ՄԱՄԱՆ ՀԱՅԱՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գերագույն հոգեւոր խորհրդի նիստը

Հունիսի 21-ին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Ն. Ս. Օ. Տ. Տ. Կարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ եւ Երուսաղեմի հայոց պատրիարք Տ. Թորգոմ արք. Մանուկյանի ատենապետությամբ իր աշխատանքն սկսեց Գերագույն հոգեւոր խորհրդի այս տարվա առաջին ընդլայնված նիստը:

Ողջույնի խոսքից հետո Վեհափառ Հայրապետը ժողովականների ուշադրությանը ներկայացրեց կաթողիկոսական ընտրությունից ի վեր 8 ամսվա ընթացքում Մայր Աթոռի գործունեության վերաբերյալ իր համապարփակ զեկույցը: Տեղեկություններ տրվեցին Մայր Աթոռի միաբանության, վարչակառուցվածքային բարեփոխումների, հոգեւոր-կրթական հաստատությունների, տպարանի գործունեության, հայրապետական այցելությունների, ինչպես նաեւ Մայր Աթոռ Ս. Էջմիածին կատարված այցերի, միջեկեղեցական հարաբերությունների եւ գործունեության այլ ոլորտների վերաբերյալ:

Գերագույն հոգեւոր խորհուրդն իր աշխատանքը շարունակեց մինչեւ հունիսի 24-ը: Եռօրյա նիստի ընթացքում լսվեցին Մայր Աթոռի համապատասխան բաժինների հաշվետվությունները՝ Մայր Աթոռի ֆինանսական կացության, 1700-ամյակի եկեղեցական գրասենյակի գործունեության, Մայր Աթոռի շինարարական աշխատանքների, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոնի գործունեության մասին, քննարկվեցին հոգեւորականների վերապատրաստության, վանական միաբանության վերահաստատման, սոցիալական ներդրումներին վերաբերող ծրագրերը: Ժողովի օրակարգում ներառված էին Հայ եկեղեցու կանոնադրության, նվիրապետության աթոռների եւ թեմերի հետ Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի, ինչպես նաեւ եկեղեցի-պետություն հարաբերությունների հետ առնչվող հարցեր:

Նստաշրջանին մասնակցում էին Եգիպտոսի թեմի առաջնորդ Տ. Զավեն արք. Չինչինյանը, ԱՄՆ արեւմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արք. Հովսեփյանը, Կենտրոնական Եվրոպայի հայրապետական պատվիրակ եւ Փարիզի առաջնորդ Տ. Գյուտ արք. Նագաշյանը, Տ. Ներսես արք. Պողապյանը, Վրաստանի թեմի առաջնորդ Տ. Գեւորգ արք. Սերդարյանը, Հնդկաստանի եւ Ծայրագույն արեւելքի հայրապետական պատվիրակ, Ավստրալիայի եւ Նոր Զելանդիայի թեմի առաջնորդ Տ. Աղան արք. Պալիոզյանը, Արգենտինայի թեմի առաջնորդ Տ. Գիսակ արք. Մուրադյանը, ԱՄՆ արեւելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ արք. Պարսամյանը, Արցախի թեմի առաջնորդ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանը, Սյունյաց թեմի առաջնորդ Արրահամ եպս. Մկրտչյանը: Ժողովի մասնակիցների թվում է նաեւ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Նավասարդ եպս. Կոմյանը, որն ի պաշտոնե ընդգրկվել է Գերագույն հոգեւոր խորհրդի կազմում:

Գերագույն հոգեւոր խորհրդի հերթական նիստին իր մասնակցությունը չկարողացավ բերել Թուրքիո հայոց պատրիարք Տ. Մեսրոպ արք. Մութաֆյանը՝ Սբ. Գրիգոր Լուսավորչի ծեռնադրության վայրը կատարելիք ավանդական ուխտագնացության պատճառով:

Ժողովի ընթացքում ցավով հիշատակվեց նաեւ Գերագույն հոգեւոր խորհրդի նախկին անդամ՝ հանգուցյալ Գրիգոր Խանջյանի անունը, հարգանքի տուրք մատուցվեց նրա հիշատակին:

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԱՍՈՒԼԻՍԸ

Հունիսի 24-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը հանդիպեց լրագրողների հետ: Վեհափառ Հայրապետը լրագրողական լսարանին տեղեկություններ տվեց հունիսի 21-ից 23-ը Մայր Աթոռ Մուրբ Էջմիածնում հրավիրված Գերագույն հոգեւոր խորհրդի այս տարվա առաջին ընդլայնված նիստում քննարկված հարցերի վերաբերյալ: Նա մասնավորապես հայտնեց, որ նիստի մասնակիցների ուշադրությանն է ներկայացվել իր համապարփակ զեկույցը կաթողիկոսական ընտրությունից ի վեր 8 ամսվա ընթացքում Մայր Աթոռի գործունեության մասին՝ բոլոր ոլորտներում: Ժողովականները մանրամասն տեղեկություններ են ստացել հայրապետական այցելությունների եւ ընդունելությունների, միջեկեղեցական հարաբերությունների, միաբանական կյանքի, վարչակառուցվածքային բարեփոխումների, հոգեւոր-կրթական հաստատությունների, տպարանի, ՔԴՔԿ-ի գործունեության, ինչպես նաեւ սոցիալական ծրագրերի, Մայր Աթոռի շինարարական աշխատանքների վերաբերյալ: Քննարկվել են Հայ եկեղեցու կանոնադրությանը, վանական միաբանությունների վերահաստատմանը, նվիրապետական աթոռների հետ Սբ. Էջմիածնի ունեցած հարաբերություններին, ինչպես նաեւ եկեղեցի-պետություն համագործակցությանն առնչվող հարցերը: Եղել է անդրադարձ թեմական կյանքի խնդիրներին ու ծրագրերին, նաեւ՝ հանրապետության առջեւ ծառացած այնպիսի ցավոտ խնդրի, ինչպիսին արտագաղթն է: Նշվել է, որ Հայ եկեղեցին փորձում է նպաստել արտագաղթի կանխմանը՝ հանրակրթական դպրոցների ուսուցիչների վերապատրաստման ծրագրի շրջանակներում աշխատատեղեր ստեղծելով: Այդ ասպարեզում առաջին միջոցառումն իրականացվել է Եղեգնաձորում, հաջորդ քայլերը կիրագործվեն հանրապետության 5 այլ մարզերում:

Ժողովականներին ներկայացվել է նաեւ «Շողակաթ» ստուդիայի, հրատարակչական, տեղեկատվական բաժինների գործունեությունը: Վեհափառ Հայրապետը, կարեւորելով այդ աշխատանքները՝ որպես Սբ. Էջմիածնի մասնակցություն հասարակական-մշակութային կյանքին, ընդգծեց միտավորականության հետ հարաբերությունների ավելի սերտացնելու անհրաժեշտությունը: «Հավատում ենք, որ մեր միտավորականության հետ համագործակցությունը պիտի նպաստի մեր առաքելության արդյունավետ կազմակերպմանը: Նրանց օժանդակությամբ պիտի կարողանանք մեր ժողովրդին ավելի դյուրությամբ հասցնել եկեղեցու կյանքին»,- ասաց նա:

Վեհափառ Հայրապետը հայտնեց, որ եռօրյա նիստի քննարկման հիմնական հարցերից էր Քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունելու 1700-ամյակի պետական գործունեությունը եւ տոնագրասենյակի գործունեությունը եւ տոնագրությունների ծրագրումը: Գրեթե կարարությունների ծրագրումը: Գրեթե ավարտի է բերված միջոցառումների ծրագիրը, այն կիրապարակվի մեկ ամսից: Տոնակատարությունների սկիզբը հատուկ արարողությամբ կազդարարվի 2000 թվի դեկտեմբերի 31-ի գիշերը:

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամներին ծանուցվել է նաեւ Վեհափառ Հայրապետի առաջիկա այցելությունների մասին:

Վերջում Վեհափառը պատասխանեց լրագրողներին հետաքրքրող հարցերին:

ՊԱՅՄԱՆ ԼՈՒՍԱՎՈՐ ԱՊԱԳԱՅԻ

Հունիսի 19-ին Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ոգեկոչեց Սբ. Հռիփսիմյանց կույսերի հիշատակության տոնը, Սբ. Հռիփսիմե եկեղեցում մատուցվեց Պատարագ: Պատարագիչն էր Տ. Տաթեւ արք. Սարգսյանը:

Հանուն Քրիստոսի հավատքի նահատակված կույսերի հիշատակի ոգեկոչումը Սբ. Էջմիածնում սկսվեց հունիսի 18-ի երեկոյան՝ նախատոնակի արարողությամբ: Երեկոյան ժամերգության ավարտից հետո, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի հանդիսապետությամբ, եկեղեցական հանդիսավոր թափորը, սկաուտների ուղեկցությամբ, Մայր տաճարից ուղղվեց դեպի Սբ. Հռիփսիմե վանք՝ տանելով սբ. կույսի մասունքն ամփոփող աջը՝ ի երկրպագություն եւ ի օրհնություն հավատավոր ժողովրդի: Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի գանձատանը պահվող սրբազան այս մասունքը, առաջին անգամ լինելով, թափորով առաջնորդվում էր դեպի սբ. կույսի անունը կրող եկեղեցի՝ ժողովրդին հաղորդ դարձնելով մասունքներից ճառագող օրհնությանը, լույսի եւ հավատքի զորությանը:

Ի մխիթարություն հավատավոր ժողովրդի՝ սրբազան մասունքը տեղադրվեց Սբ. Հռիփսիմե եկեղեցու խորանին, որտեղ մինչեւ ուշ երեկո եւ հաջորդ օրը՝ Հռիփսիմյանց կույսերի տոնին, եկեղեցի այցելողներն առիթ եւ հնարավորություն ունեցան հաղորդակցվելու օրհնյալ աջի հետ, շնորհազարդվելու նրանից ճառագող զորությամբ:

Նախատոնակի արարողությունից հետո, ձեռամբ Վեհափառ Հայրապետի եւ սրբազան հայրերի, տեղի ունեցավ նաեւ խաչերի օրհնություն: Փոքրիկ այդ խաչերը տրվեցին հունիսի 19-24-ը հավաքական մկրտության ընթացքում մկրտվող մանկիկներին:

Հունիսի 20-ին եւ 22-ին Հայաստանյայց Առաքելական եկեղեցին ոգեկոչեց նաեւ Սբ. Գայանյանց կույսերի տոնը՝ Սրբազան Պատարագ մատուցելով Սբ. Գայանե վանքում: Հունիսի 22-ին Պատարագ մատուցվեց Սբ. Շողակաթ եկեղեցում՝ Սբ. Մարիանե կույսի գերեզմանին:

Բոլոր այս երեք եկեղեցիները վեր են հառնված այն վայրերում, ուր ըստ ավանդության՝ նահատակվել են Հռիփսիմյանց եւ Գայանյանց կույսերը՝ մնալով Քրիստոսի հավատքին անդավաճան:

Օծվեցին Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչերը

Հունիսի 26-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Երեւանի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու խաչերի օծումը:

Աղոթքի եւ շարականների երգեցողությամբ՝ խաչերը նախ լվացվեցին գինիով: Ապա տեղապահ սրբազանը սրբալույս մյուռոնով օծեց զույգ խաչերի կենտրոնները, աջ եւ ահյակ կողմերը:

Մեր մեծերի խոսքը՝ կյանքի ճանապարհ

Գարեգին Ա կաթողիկոսի մահվան տարելիցին Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում Վեհափառի անվամբ բացվեց աստվածաբանական-հայագիտական կենտրոն:

Հունիսի 25-ին՝ Կաթողիկե Սբ. Էջմիածնի տոնի օրը, Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում նշվեց Ամենայն Հայոց կաթողիկոս երջանկահիշատակ Գարեգին Ա-ի վախճանման տարելիցը:

«Գարեգին Ա լուսահոգի Ամենայն Հայոց կաթողիկոսը, որպես ճշմարիտ հոգեւորական, իր անձով ու անանձնական գործունեությամբ եկավ մեկ անգամ եւս հաստատելու եւ իմաստավորելու հայ եկեղեցականի կոչումն ու առաքելությունը. բարձրացնելու Հայ եկեղեցու դերն ազգային կյանքում: Խոհի ու մտածումի ամբողջության մեջ գեղաճաշակ եւ շարականաբույր նրա խոսքն արարչագործ ուժականությամբ բացում էր հույսի. հավատքի դռները, հայկական կերպ ու դրոշմ, շունչ ու ոգի հաղորդում հայ հավատացյալին»,- հընթացս Սբ. Պատարագի՝ հայրապետական իր խոսքն ուղղեց ներկա հավատացյալներին Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսը՝ իր խոնարհումն ու ակնածանքը բերելով երջանկահիշատակ Գարեգին Ա Հայրապետի հիշատակին:

Ինչպես Նորին Սրբությունը նշեց, կյանքի 67 տարիներից 50-ը երանաշնորհ կաթողիկոսն ապրեց որպես Հայ Առաքելական եկեղեցու սպասավոր՝ սարկավագությունից մինչեւ Ամենայն Հայոց կաթողիկոս՝ մշտապես ունենալով եկեղեցու եւ ազգի միասնականության նվիրական երազն ու հույսը:

Հավատ սրբազան արարողության, հանդիսապետությամբ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի, Վեհափառի շիրմին տեղի ունեցավ հոգեհանգստյան արարողություն: Արարողության ավարտին, հանուն Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ի եւ Կիլիկյան ողջ միաբանության, վշտակցության եւ զորակցության խոսք ասաց Տ. Սեպուհ եպս. Սարգսյանը:

Երեկոյան, ի ոգեկոչումն հանգուցյալ Վեհափառ Հայրապետի, Գարեգին Բ կաթողիկոսի բարձր նախագահությամբ, Մայր Աթոռի «Ալեք-Մարի Մանուկյան» գանձատանը տեղի ունեցավ Գարեգին Ա-ի անվան աստվածաբանական-հայագիտական կենտրոնի հանդիսավոր բացումը: Նորին Սրբության նախաձեռնությամբ Մայր Աթոռում գիտական այս կենտրոնի հիմնումը Գարեգին Ա կաթողիկոսի երազի իրականացումն էր: Ժամանակավորապես գանձատան շենքում հանգրվանած գիտական կենտրոնը հետագայում կունենա իր առանձին եւ առավել հարմարավետ շենքը: Իսկ այսուհետ մտավորականության ներկայացուցիչները կարող են օգտվել կենտրոնի գրադարանում հավաքված տասնյակ հազարի հասնող գրականությունից եւ իրենց աշխատանքով, ինչպես Վեհափառ Հայրապետն ասաց, «հաղորդակցվել Գարեգին Ա-ի հետ, որ գրքի մարդ էր, եւ գիրքը նրա կյանքն էր»:

Հանդիսությունն ավարտվեց Վեհարանի դահլիճում, ուր կրկին հնչեցին հիշատակի խոսքեր:

Վեհարանում շարունակվող հուշ-երեկոյի ընթացքում Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը երանաշնորհ կաթողիկոսի անվամբ գիտական կենտրոնի բացումը նկատեց որպես իմաստուն որոշում, որ կոչված է հավերժացնելու մաշտոցյան ոգով ապրած Վեհափառի հիշատակը: Հիշատակի խոսքեր ասացին նաեւ ՀՀ սահմանադրական դատարանի նախագահ Գագիկ Հարությունյանը, Մատենադարանի տնօրեն Սեն Արեւշատյանը, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ֆադեյ Սարգսյանը, Մեսրոպ արք. Աշճյանը: Իրենց երգով ու ասմունքով Վեհափառ Հայրապետի հիշատակին իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Մայր Աթոռի եւ Երեւանի կամերային երգչախմբերը, ճանաչված ասմունքողներ:

«Հուշ-երեկոն որքան էլ հարգանքի տուրք է Վեհափառի հիշատակին, այն առավելաբար ապրողների համար է, որպեսզի մշտապես գիտնանք արժեւորել, գնահատել ու մեծարել մեր մեծերին, հատկապես երբ նրանք ապրում են եւ մեզ հետ են, որպեսզի կարողանանք լսել նրանց պատգամները ու հորդորները եւ իմաստուն նրանց խոսքը դարձնենք կյանքի ճանապարհ»,- եզրափակելով երեկոն՝ ասաց Նորին Սրբությունը:

Մայր Աթոռում ոգեկոչման հանդիսություններին ներկա էին Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը, ՀՀ վարչապետ Անդրանիկ Մարգարյանը, Հայ եկեղեցու բարեբար Վաչե Մանուկյանը, երանաշնորհ կաթողիկոսի հարազատները, գերաշնորհ եւ հոգեշնորհ հայրեր:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տեղեկատվության համակարգ

ՆԵՐՍԵՍ ՎԱՆԱԿԱՆ

Հյոթ...

Երկնչիս՝ Աստված Պատարագ էր.
Հայրապետն էր պատարագում
Պատարագը կամիպոսյան:

Սրբերն էին խոսքը-խոսքը կանգնել,
Սերովբեները, վերովբեները,
Դասերն էին Հրեշտակաց
Պատարագում Պատարագին:
Իսկ հոգիները երգում էին...
Իր վերվերով, իր ցավերով,
Անգամ լեզուն կորցնելու՝
Աստված Պատարագն էր մատուցում
Հայրապետը պատարագված:

Էպոված լույս է շողշողացող.
Հայրապետը պատարագեց
Այդ լույսի մեջ ապրված...

Թե կարողանա՝ է՛կ, հաղորդվի՛ր
Էպոված այն ոսոյն խորհրդով:

25.06.2000թ.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՅԱՆՔԸ ՎԱՐՈՂ ԵՐԵՔ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ...

Հունիսի 29-ին Մայր տաճարի զանգերը երեկոյան ժամերգության սկզբին ազդարարեցին սգո ղողանջներով. Հայոց Գարեգին Ա Հայրապետին այլեւս մեզ հետ չէր...

Խոցյալ հոգով ու սրտաբեկ, երեկոյան աստվածապաշտությունն իր ավարտին հասցնելով, հոգեւորական եւ ճեմարանական շրջապեցիկը Վեհարան՝ հոգեհանգստյան արարողություն տեսնելու համար:

Վահճանյալ Հովվապետի սնարի շուրջ արցունքոտ աչքերով նստած էին նրա հարազատները ու հոգեւոր զավակները: Սկսվեց հոգեհանգստյան պաշտոնը: Սրտամորմոք հոգեցողությունից հետո հնչեց Մայր տաճարի լուսարարապետի սքսիֆեցնող ձայնը. «Քրիստոս Որդի Աստուծոյ, Անոխակալ եւ Բարեգութ, զքա՛ Քո արարչական սիրովդ ի հոգիս հանգուցեալ ծառայից Քոյ: Եւս առաւել նորոգ հանգուցեալ ցառայի Քոյ՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Ա...»:

Փոքրիկ սենյակում խունվածներից եւ ոչ ոք չէր ուզում հավատալ, որ Գարեգին Վեհափառը ոչ հա է:

Մայրավանքի հոգենորոգ խաղաղությունը վերածվեց հոգեխռով անհանգիստ անդորրի...

Շնորհազարդ գահակալը ոչ հա է...

....Շատ դժվար է մի քանի տողով ներկայացնել կամ պարզապես խոսել մի անչնչավորության մասին, ով իր իմաստությամբ, բազմատեսակ շնորհներով եւ ճառագայթումով չուներ իրեն մրցակից մեկը: Սակայն մեր նպատակից դուրս է Վեհափառ Հայրապետի անձի ու գործունեության մասին խոսելը, քանի որ թե՛ մեր կարողությունները եւ թե՛ մեր ասելիքը բնավ թույլ չեն տալիս:

*Բայց, այնուհանդերձ, չենք կարող չարտահայտվել, որովհետեւ նա էր, որ իր առհնքնող էությամբ եւ համոզիչ խոսքով պատանեկան մեր հոգում գիտակցված ջերմ սեր, պատկառանք ու նվիրում սերմանեց հայ գրքի, հայոց եկեղեցու, հայ հոգեւորականի կոչման եւ հայ հավատացյալի հանդեպ: Այո, **գիտակցված**, քանի որ մինչ այդ, եթե ներաշխարհումս ինչ-որ մի բան էլ կար, ապա դա լոկ հրապուրանք էր, սուսկ ապագաս փոքրիշատե բարվոք կազմակերպելու հնարավորություն էր...*

Սակայն, փա՜ռք Ամենակալին, որ Տերը՝ որպես սիրող Հայր, թույլ չտվեց, որ կործանարար այդ հրապուրանքն արմատավորվեր պատանեկիս անմշակ, ըստ այդմ էլ՝ ընդունակ ամեն ինչ ընկալելու հոգեւոր անդաստանումս: Նա՝ Հայոց Հայրապետը, ով ամփոփում է իր մեջ Սուրբ Հոգու շնորհների գեղումը, իր շնորհալի խոսքով վերափոխեց, վերակերտեց եւ հասկացրեց, որ նա է կոչված բարդրանալու, ով ինքն իրեն անմնացորդ խոնարհեցնում է հայ գրքի առջեւ, նա է իր ճակատը հաղորդության լուսե պսակով զարդարում, ով ինքնապատարագումով տքնում է «վասն պայծառութեան Եկեղեցվոյ Հայաստանեայց», նա է իրապես հոգեւորական, ով հոգու մարդ է, ով Սուրբ Հոգի Աստծո ճառագայթները ցոլացնող անչ է, նա է ճշմարիտ հայրն ու քաջ հովիվը հայ հավատացյալի, ով ի վիճակի է ասելու. «Առապասիկ, Վեհափառ տեր, առաքեա զիս, ուր որ կամիս»:

Այո, թեպետ երանաշնորհ Հայրապետի հետ գրեթե անշնչական շփում չունեցանք, բայց ամեն անգամ, երբ առիթ էր ստեղծվում ունկնդրելու հայոց ոսկեբերանին, միշտ նոր բան էինք ուսանում: Իսկ եթե դժվարություններից հոսահատված էինք լինում կամ էլ տխրաբացած, ապա նրա ոգեշնչյալ խոսքը՝ որպես հորդաբուխ աղբյուր, սնուցում էր մեր պապակ հոգին եւ ծաղկեցնում ու պտղավորում: Եվ ամեն անգամ նրա մխիթարող ու քաջալերող, խրատող եւ դրվատող խոսքերից հետո ինքս ինչ հարց էի տալիս, թե ինչո՞վ է պայմանավորված Վեհի խոսքի ուժականությունն ու վերափոխելու կարողությունը: Եվ պատասխանը չէր ուշանում. հոգու ներշնչանքով: Մեր մտքում ծնվում էր՝ հավատքն է մայրն այդ խոսքի, հույսն է դաստիարակն այդ քանի, սերն է սնուցիչն այդ բարդառի:

Արդարեւ միայն աներկյա ու անհուն հավատք ունեցողը կարող էր այդպես քարոզել, այդպես ոգեւորվել, այդպես փթթել ու ծաղկել: Իսկ այդ քարոզի, ոգեւորության ու գրական ծաղկումի մեջ առանորդու «ամենատես աչքը» չէր կարող չնշմարել այն մեծ սերը, որով շաղախված էր երջանկահիշատակ Հայոց Հովվապետի խոսքն ու ժպիտը, ոգեւորությունն ու քեղուն գրչի երկունքը: Հայ հավատացյալը չէր կարող չզգալ նրա հոգում առկայծող հույսի ջերմությունը, հետեւաբար չէր կարող չհուսադրվել, անցողիկը մնայունից ու հավիտենականը ժամանակավորից չզանազանել եւ չտրոկալ:

Հիրավի, հայոց շնորհալի Հայրապետի «վարիչ երեք սկզբունքները կարելի է դասանել սրանք»՝ հավատք, հույս, սեր, որովհետեւ ասրմամածախուսային այս առաքինություններն էին, որ վստահություն ներշնչեցին կյանքից «առաւել եւ կյանք փոխադրվող տրարաթիւր Հովվապետին ասելու. «Հոգեկան խորը հուզումով կբաժանվիմ ձեզմե, կմիանամ Աստուծո՝ Հարուցյալ Տիրոջս...»:

Խոսկ, աղոթք եւ բյուր օրհնություն շնորհալի մեր Հայրապետի հիշատակին. ամեն:

Արքուր դպիր Կարապետյան

«Նույնպես եւ բոլոր հայրերը, որոնք առաքելական կանոններից հետո են եկել, անչափ ունենալով բարեպաշտությունը՝ մեզ, վերջիններս, օրինակ ցույց տվին. ուստի այս երանելին, իր վրա վերցրած ուներ ավանդածների պարտիվը, եւ նույնը պարտիվրելով ազդարարում էր ամեն իրեն մոտեցողներին...» (Կորյուն):

1700-ամյակին ընդառաջ

ՀԱՎԱՔԱԿԱՆ ՄԿՐՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարությունների շրջանակներում հունիսի 19-24-ը Ամենայն Հայոց Գարեգին Բ Վեհափառ Հայրապետի օրհնությամբ՝ Հայաստանի բոլոր մարզերում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու թեմերի միջոցով տեղի ունեցավ հավաքական մկրտություն, որի ընթացքում մկրտվեցին 2000 թվականի հունվարի 1-ից փետրվարի 14-ը Հայաստանում ծնված բոլոր երեխաները: Մկրտության՝ նախապես հայտարարված վայրի փոփոխության որոշումը 1700-ամյակի եկեղեցական հանձնաժողովը կայացրեց բազմաթիվ ծնողների դիմումների հիման վրա, որոնցով նրանք խնդրում էին արարողությունները կազմակերպել տեղերում՝ հաշվի առնելով փոքրիկ երեխաներին հունիսյան հեղձուցիչ շոգի պայմաններում Էջմիածին տեղափոխելու դժվարությունները:

Թեմերի հոգևոր հովիվները կատարեցին մկրտության արարողությունները, որոնց ընթացքում Աստծուն որդեգրվեց ավելի քան 3500 երեխա: Մկրտվողները ստացան մկրտության վկայականներ:

1700-ամյակի գրասենյակ

ՄԿՐՏՈՒԹՅԱՄԲ ԱՍՏԾՈՒՆ ՈՐԴԵԳԻՐ

«Մարմին եւ անդամ եղիցին եկեղեցւոյ քոյ սրբոյ»:
Մաշտոց

Սարդկային ծնունդն աստվածային խորհրդավոր հրաշքն է, իսկ մկրտությունն այդ փրկանելի հրաշքի անտես մեկնությունն է, որով վերստին ծնվում, մաքրվում, սրբվում է մարդ էակը, Սուրբ Հոգու անհայտանելի զորությամբ դառնում մարմին եւ անդամ Սբ. Եկեղեցու, որդեգրվում, հավատարմագրվում Աստծուն: Մկրտությամբ, որ մեր եկեղեցու 7 սրբազան խորհուրդներից է, արժանանում ենք քրիստոնյա, հայ քրիստոնյա ճշգրտական կոչմանը: Սակայն թե ինչու, երբ 301 թվականին մենք պետականորեն ընդունեցինք քրիստոնեական կրոնը, Սբ. Գրիգոր Լուսավորիչը վերխոյացրեց հայոց հոգու դրամարը, որի մարմնի անդամները դարձան հավաքական մկրտությամբ մկրտված նորադարձները՝ Քրիստոսի սրբարար մարմնի հետ միավորված:

Եվ քրիստոնյա ու հայ անունները շաղկապվեցին, նույնացան, ջուլվեցին եւ դարձան անբաժան՝ հայ քրիստոնյա, քանզի մեր ժողովուրդն իր Տիրոջ նման չարչարվել, խաչվել, թաղվել եւ նաեւ հարությունն է առել ի տես բոլորի՝ պայծառակերպելով իր հայ քրիստոնյա լինելու հավերժականության առեղծվածը: Քրիստոնյա լինելու համար պայման է մկրտվելը: Սակայն աշխարհում քրիստոնեությունը պետականորեն առաջինն ընդունած Հայաստանը 20-րդ դարասկզբին իր խորհրդականացումով շատ հեռացավ քրիստոնեական ավանդույթներից եւ եկեղեցական խորհուրդներից: Հայ մարդը միայն ենթագիտակցորեն էր զգում իր քրիստոնյա լինելու հանգամանքը: Ոչ բոլորին էր հայտնի, որ մկրտվելով ինքը որդեգրվելու է Աստծուն՝ մարմին ու անդամ դառնալով մեր դարավոր դրամարի, որի ճարտարապետներն էին Տիրոջ առաքյալները, իսկ շինարարը՝ Սբ. Լուսավորիչը: Թվում էր, թե կորցնում ենք մեր սրբազան ավանդույթները, սակայն ամենողորմ Աստված դժվարին, սակայն հաղթական ճանապարհով առաջնորդեց, որպեսզի վերագտնենք մեր հոգին ու հավատը: Եվ բնական է, որ անկախացյալ մեր հայրենիքում եկեղեցին իր էության սրբությամբ, հոգեւոր բարոյական մաքրությամբ եւ աստվածահաճո կյանքի վերակերտողը պիտի դառնար, իր հոգեւոր ազդակները պիտի գործադրեր, որպեսզի կրկին հաստատվեր միություն, տիեզերական եղբայրություն, խաղաղություն...

Պետք է լրացվի մեր կյանքի հոգեւոր սովը եւ հագեցվի կրոնական ծարավը: Իսկ այդ ամենին կնպաստի նախնիների ավանդներին հավատարիմ սերունդ կրթելն ու դաստիարակելը, որն անպայման պետք է լինի աստվածավախ, եկեղեցասեր, հայրենասեր: Դրան էր միտված նաեւ քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի

գրասենյակի գործունեության հիմնական ուղղություններից մեկը, որի իրականացրած լայնածավալ ծրագրերից էր Հայաստանում 2000 թվականի հունվարի 1-ից փետրվարի 14-ը ծնված մանուկների հավաքական մկրտությունները, որոնք կայացան հունիսի 19-24-ը: Մկրտության մտահղացումն ու նախաձեռնությունը 1700-ամյակի գրասենյակի նախկին վարիչ-քարտուղար Մեսրոպ արք. Աշճյանինն էր: Այն իրականացավ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի բարդի տնօրինությամբ եւ հովանավորությամբ, 1700-ամյակի գրասենյակի ներկայիս վարիչ-քարտուղար Հովնան արք. Տերտերյանի կարգադրությամբ եւ ջանադիր կազմակերպմամբ: Հավաքական մկրտությամբ մկրտվեց դարեհսկզբին Հայաստանում ծնված ավելի քան 3500 մանուկ, իսկ մկրտության արարողությունները տեղի ունեցան Հայաստանի բոլոր մարզերում: Լայնածավալ այս ծրագրի բարեհաջող կայացմանն իրենց նպաստը բերեցին նաեւ Հայաստանյայց եկեղեցու թեմական առաջնորդները, Մայր Աթոռի միաբանությունը, մարզային եւ քաղաքային իշխանությունները: Հավաքական մկրտությունները իանդավանել էին թե ժողովրդին, թե հոգեւոր դասին, որովհետեւ սերունդ էր հայանում, եւ շարունակվում էր քրիստոնեաբար ապրելու մեր երազի իրականացումը: Իսկ 1700-ամյակը հրաշալի մի առիթ է մեր ժողովրդի հոգեւոր վերակերտումին նպաստելու:

Դրա շրջանակներում իրականացվող հոգեւոր միջոցառումներն ու սրբազան արարողություններն անհրաժեշտ լինելուց բացի, առանձնանում են իրենց խորհրդով, որն անպայման մեզ դրանում է դեպի մեր հավատի ու հոգու ակունքները, դրանցով վերակենդանանում են վանքերն ու դամբարանները, ուր դարեր ի վեր հանգրվանել են մեր հոգու եւ մտքի բանկագին արժեքները:

Այո՛, մկրտության բոլոր օրերի ընթացքում աստվածային օրհնությունների եւ սրբարար շնորհների էին արժանանում հազարավոր երեխաներ: Այդ օրերը նրանց կյանքի թերեւս ամենահիշարժան օրերն էին, որովհետեւ մկրտվելով քրիստոնեական սրբազան խորհրդով՝ նրանք սրբագործվեցին մյուռոնով, որդեգրվեցին Աստծուն եւ արժանացան Սուրբ Հոգու շնորհներին: Այդ սրբազան ճշմարտությունն է փաստվում նաեւ աստվածաշնչյան պատմությամբ. «Երբ Հիսուս մկրտվեց, իսկույն ջրից դուրս եկավ եւ ահա երկինքը բացվեց Նրան, եւ Նա տեսավ Աստծու Հոգին, որ իջնում էր ինչպես աղավնի, որ գալիս էր Իր վրա»:

Մկրտության ավազանի առջեւ կանգնած, հայրենակիցներս ցնծությամբ մասնակից, միահիթարված ու երջանիկ էի, իսկ շուրթերիս աղոթքն էր. «Տէ՛ր, կեցոյ զու զհայս...»:

Զարեհ վրդ. Կաբադյան

1700-ԱՄՅԱ ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԳԵՂԱՆԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ)

«....յեկեղեցւոջ Աստուծոյ փեսանեմք նկարեալ զամենայն զարանչելագործութիւնսն Քրիստոսի զոր արար....»:
Վրթանես Քերթող

Միջնադարյան հայ արվեստի զարգացման դարավոր ճանապարհի երկու կարեւորագույն ուղեգծերը կերպավորվում են տերունական տեսարանների եւ մեր եկեղեցու պատմությանը նվիրված գործերի փոխկապակցված ամբողջականությամբ:

Քրիստոնեական հավատքից ծնունդ առած եւ նրա տարածման, հետագայում նաեւ պահպանման աներեր կռվան հանդիսացող արվեստի ստեղծագործությունները (քանդակ, որմնանկար, մանրանկար, գեղանկար), գեղագիտականից բացի, մեզ համար այսօր պատմամշակութային մեծ արժեք են ներկայացնում: Դրանցում դրսեւորվում են ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի կրոնադավանաբանական որոշ դիրքորոշումները, այլ նաեւ արվեստի գործի մեջ մարմնավորված քրիստոնեական աշխարհընկալման ազգային առանձնահատկությունները: Այս երեւույթի կապը հայոց եկեղեցու հարդարանքի հետ պատշաճ ուշադրության չի արժանացել եւ բազմակողմանի քննության ապասող խնդիրներից մեկն է: Փորձենք հայոց եկեղեցու հարդարանքում տեղ գտած տերունական տեսարանների ուսումնասիրությամբ որոշ պարզաբանումներ կատարել՝ հիմնվելով գրավոր աղբյուրների եւ մի շարք եկեղեցիների նկարազարդումների վրա:

Բոլոր ժամանակներում հայոց եկեղեցին չափավոր վերաբերմունք է ցուցաբերել պատկերների նկատմամբ: Տվյալ հարցի վերաբերյալ նշենք Մաղաքիա արք. Օրմանյանի ծեւակերպումը նրա «Ծիսական բառարանից». «Մեր եկեղեցին, որ արձանի համար բոլորովին ներող չէ, իսկ քանդակի համար՝ բավականին զգուշավոր, պատկերի համար ներող է, բայց այն էլ *ոչ առանց չափավորության եւ զգուշավորության»* (ընդգծումը՝ Ք. Ա.): Հայոց եկեղեցու հայրերը պատկերներին անդրադառնալիս մշտապես զգուշացնում են. պատվելով Քրիստոսի, առաքյալների, մարգարեների պատկերները՝ այնպես պետք է վարվել, որ ժողովուրդը պատկերապաշտ ու նյութապաշտ չդառնա, եւ ինչպես 11-րդ դարում գրում է Անանիա վարդապետ Սանահնեցին, «տգիտաբար գայթակղվելով՝ կռապաշտության մեջ չընկնի»:

Վաղմիջնադարյան եկեղեցիների ներսի հարդարանքի մասին պատկերացում կազմելուն մեծապես օգնում է 7-րդ դարի եկեղեցական գործիչ եւ բանաստեղծ Վրթանես Քերթողի «Յաղագս պատկերամարտից» երկը: Հեղինակը, կարեւորելով տերունական պատկերների դերն ու նշանակությունը հավատքի տարածման գործում, գրում է. «....ամենայն



նկարեն յեկեղեցիս՝ զոր գիրք սուրբք պատմեն. ո՞չ ապաքէն դեղով գրեալ են զգիրսն, զնոյն բանս դեղովքն նկարեալ է. յեկեղեցիս ի գրոյն ականջք միայն լսեն, իսկ զնկարսն աչօք տեսանեն եւ ականջօք լսեն, եւ որ սրտիւք իմանան եւ հաւատան»: Վրթանես Քերթողը թվարկում է նաեւ այն՝ տեսարանները, որոնք զարդարում են եկեղեցիների որմերը: Դրանք Քրիստոսի սքանչելագործությունները են՝ «զծնանելն եւ զմկրտելն, զչարչարանս եւ զխաչելութիւնն, զթաղումն եւ զյարութիւնն, զյամբարձումն յերկնիս....», զսուրբ կոյսն Աստուածածին ի գիրկս իւր ունենալով զՔրիստոս»: Տերունական տեսարաններից բացի՝ եկեղեցիներն ու վկայարանները՝ զարդարվել են հայոց դարձի պատմությանը նվիրված պատկերներով, որոնց մասին նույնպես հիշատակում է Վրթանես Քերթողը: Այսպես՝ «....տեսանեմք նկարեալ զսուրբ Գրիգոր եւ աստուածահանոյ չարչարանք իւր եւ սուրբ առաքելութիւնք, եւ.... զերանելի եւ զփառաւոր կոյսն սուրբ Գայիանէ եւ զՀռիփսիմէ հանդերձ ամենայն ընկերօքն եւ յաղթող նահատակօք....»:

Որմնանկարն ավելի զգայուն է ժամանակի կործանարար ազդեցությունների նկատմամբ, որի պատճառով էլ վաղ շրջանից ներքին հարդարանքն ամբողջությամբ պահպանած եկեղեցի, կարելի է ասել, չի մնացել: Ժամանակի փորձություններին դիմագրաված, երբեմն խիստ վնասված վիճակում կամ հատվածաբար մեզ հասած որմնանկարներում տեսնում ենք 7-10-րդ դարերում մշակված այն ավանդական մոտեցումները, որոնք շարունակվում են հետագա դարերի եկեղեցիների հարդարանքում:

Շարունակությունը էջ 4

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(ՄՈՆՈՒՄԵՆՏԱԼ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ)

Սկիզբը էջ 3

Այդ ժամանակաշրջանի մի շարք եկեղեցիներում (Լմբատավանք, Արուճ, Գնդեվանք, Տաթեւ) պահպանվել են Քրիստոսի՝ ավագ խորանի գմբեթարդում վեր խոյացող մոնումենտալ պատկերները՝ գահակալ, օրենք տվող Աստծո եւ համբարձման հորինվածքներով: Այս կենտրոնական պատկերի շուրջ տարբեր եկեղեցիների հարդարանքում տեղ են գտել զանազան տեսարաններ: Այսպես օրինակ՝ Լմբատավանքի ավագ խորանի կողային պատկերում Սուրբ Սարգիսն ու Սուրբ Գեւորգն են, իսկ Արուճում՝ նույն տեղը, վեցական առաքյալներն են, Տաթեւի Պողոս-Պետրոս եկեղեցում՝ Քրիստոսի ազդեցիկ պատկերի ներքեւում, նկարված են հասակով մեկ կանգնած մարգարեների, առաքյալների, վարդապետների ֆիգուրներ եւ ահեղ դատաստանի տեսարան: Քրիստոսին պատկերելու այս ձեւն ավելի բնորոշ է վաղ շրջանի որմնանկարչությանը, որին անդրադառնում է նաեւ Մաղաքիա արք. Օրմանյանը. «Ամենահին ձեւով սեղանի պատկերները, խորանի փրկչի պատկերը լինելով, դրվում կամ գծվում էին սրմի վրա, եւ առաքյալների պատկերներն այն շրջապատում էին»: Ուշագրավ է այն, որ պատկերագրական ավանդական տեսարաններն ընդհանուր են նույն ժամանակաշրջանում ստեղծված արվեստի տարբեր գործերի համար: Վաղմիջնադարյան եկեղեցիների արտաքին հարդարանքում հանդիպող սակավաթիվ թեմատիկ պատկերների, հատկապես լայն տարածում գտած հուշակոթողների պատկերաքանդակների, Վրթանես Քերթողի թվարկած տեսարանների եւ վերոհիշյալ որմնանկարների համեմատությունը հաստատում է մեր եզրահանգումը:

Եկեղեցու ներսի տարածությունը հնարավորություն է տվել ամբողջական ներկայացնելու տերունական պատկերաշարը: Այս իմաստով մեծ հետաքրքրություն են ներկայացնում Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու (915-921 թթ.) եւ Անիի Տիգրան Հոնենցի սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու (1215 թ.) նկարազարդումները:

Արտաքին եւ ներքին հարդարանքով անկրկնելի, հայ միջնադարյան ճարտարապետության նպակի ուշագրավանի՝ Աղթամարի Սբ. Խաչ եկեղեցու որմնանկարներն արժեքավոր են ոչ միայն միջնադարյան հայ արվեստի ուսումնասիրության համար, այլ նաեւ, ինչպես նշում է Սիրարփի Տեր-Ներսիսյանը, «արեւելյան քրիստոնեական եկեղեցու համար», քանի որ նշված ժամանակաշրջանից այնքան ամբողջական հարդարանքը պահպանած ուրիշ ոչ մի եկեղեցի գոյություն չունի: Եկեղեցու որմերը զարդարում են Հին ու Նոր Կտակարանի տեսարանները, որոնք ներկայացված են առանձին պատկերաշարով: Այսպես. բմբուկի ներսում պատկերված է Ծննդոց շարքը՝ սկսած դեպի դրախտ Ադամի մուտքից մինչեւ այնտեղից արտաքսումը: Եկեղեցու խորանները, գմբեթարդները, կամարները ու կոնքերը որմնազարդված են երկու եւ երեք առանձնացված տեսարաններով, այդ թվում՝ ավետում, ծնունդ, ընծայումը տաճարին, Հովսեփի երազը, փախուստ դեպի Եգիպտոս, ման կանց կոտորածը, մկրտություն, այլակերպություն, հարսանիք Կանայում, Քրիստոսի քարոզը, Ղազարոսի հարությունը, մուտք Երուսաղեմ, Քրիստոսի օծումը Բեթանիայում, ոտնլվա, Քրիստոսը Պիղատոսի առաջ, խաչելություն, սուրբ կանայք գերեզմանի մոտ, դժոխքի ավերումը, Քրիստոսը երեւում է Մարիամ Մագդաղենացուն, Աստվածամոր ննջումը:

Անիի Տիգրան Հոնենցի՝ ամբողջությամբ նկարազարդված Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու որմնանկարներում տեղ են գտել Նոր Կտակարանի տեսարանները, մարգարեների, առաքյալների, քրիստոնեական ընդհանրական եկեղեցու սրբերի պատկերները, ինչպես նաեւ հայոց դարձի պատմությանը նվիրված հորինվածքներ: Դրանք հետեւյալ դասավորությունն ունեն. բմբուկի ներսում Քրիստոսն ամենակալ եւ համբարձման տեսարաններն են, ներքեւում՝ Աստվածամոր, տասներկու առաքյալների, ավելի ներքեւ՝ տասնվեց մարգարեների, նավերի վրա՝ մեղալիոնների մեջ, չորս ավետարանիչների պատկերները: Ավագ խորանում երեք շարքով տեղավորված են՝ վերեւում՝ բարեխոսության տեսարանը, արեւմտյան մասում՝ Գրիգոր Լուսավորչի վարքի տասվեց դրվագները: Ավետարանական տեսարաններից ընդգրկվել են ավետումը, ծնունդը, մոգերի երկրպագությունը, Ղազարոսի հարությունը, մուտք Երուսաղեմ, իջեցումը խաչից, համբարձումը, դժոխքի ավերումը եւ Աստվածամոր ննջումը:

Երկու եկեղեցիների նկարազարդումներում տեղ գտած տերունական տեսարանները զուգահեռ ներկայացնելով՝ ավելի ակնառու է դառնում պատկերագրական ամբողջական շարքի կուռ միասնությունը, որը գոյություն է ունեցել մեր եկեղեցիների հարդարանքում:

Քնարիկ Ավետիսյան

Շարունակելի

ԱՆՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆ

«Ուրախացողների հետ ուրախանալ, լացողների հետ լալ» (Հռոմ., ԺԲ, 15):

Սիրելիներ՝ եղբայրներ եւ քույրեր, որդիներ նույն ժողովրդի, նույն հայրենիքից, որ այժմ գտնվում եք թե նյութական եւ թե հոգեկան տարակուսանքի, շփոթության մեջ, ***ունկնդրե՛ք*** *Տիրոջ խոսքը, որովհետեւ թե* ***«Ամբողջ հոգով ու էությամբ լսեք Նրա խոսքը, ապա Տերը կների ձեր բոլոր մեղքերը, կողորմի ձեզ եւ դարձյալ ի մի կհավաքի ձեզ բոլոր ժողովուրդների միջից: Եթե դուք ցրիվ եք եկել երկրի մի ծայրից մինչեւ մյուս ծայրը, այդտեղից էլ կհավաքի ձեզ ձեր Տեր Աստվածը: Այնտեղից կվերցնի ձեզ ձեր Տեր Աստվածը եւ ձեր Տեր Աստվածը ձեզ կբերի ձեր հայրերի ժառանգած երկիրը: Կժառանգեք այն, ձեզ համար լավ կլինի, եւ Աստված ձեզ ձեր հայրերից տասնապատիկ ավելի կբազմացնի»*** *(Բ Օրենք, Լ, 1-5):*

Մեր բոլոր դժբախտությունների ու նեղությունների պատճառն այն է, որ մենք փակել ենք մեր հոգու դռները եւ մերժել Տիրոջ խոսքը, կործանել մեր հոգու տաճարը, իսկ հավատքը դրել անցավոր կարիքների ծառայության տակ: Եվ որպեսզի ինքներս մեզ արդարացնենք, շատ բաներ անհնարին եւ անիրագործելի ենք համարում մեզ համար: Անտարբերությունը հաղթել է մեզ, քանզի հենց նա է անմեօրյա եւ մշտական կործանիչն ամենամեծ, ամենասուրբ տաճարի՝ մեր հոգու կենդանի տաճարի:

Մենք այնքան ենք կործացել ու անզգայացել, որ հաճախ չենք տեսնում ինքներս մեզ. էլ չեք ասում՝ մերձավորների, հասարակության, հայրենիքի մասին: Իրականում հարցը ոչ թե ընդհանրապես չտեսնելն է, այլ անտարբերությունը, իսկ սա նշանակում է, որ մենք ինքիցիայլոց, առանց խղճահարության եւ առանց ափսոսանքի ենք նայում մեր շուրջը: Մենք ձեռք ենք բերել անմիտ ու անհոգի աշխարհընկալում՝ մոռանալով, որ չափազանց փոքր ու թույլ ենք այս իսկա տիեզերքում: Անհատապաշտությունն ու էգոիզմը ճակատագրական որ-բերգություններ են մեզ համար եւ զգվելի՝ Աստծու առջեւ, քանի որ ***«Մեզնից ոչ ոք իր համար չի ապրում եւ իր համար չի մեռնում»*** *(Հռոմ., ԺԴ, 7): Մեզնից յուրաքանչյուրն ազգային յուրօրինակ արժեք է, բայց մենք անխոնջորեն, բոլոր հնարավոր միջոցներով իրականացնում ենք մեր ինքնաոչնչացումը: Անտարբերությունը դանդաղորեն իրականացնում է մեր անձնասպանությունը: Մի՞թե անտարբերությամբ փակելով շրջադարձային շրջան մենք արդեն ազատ անկման իրավունք ենք ձեռք բերում: Եվ այդ ազատությունը կարծես «փրկում է» մեզ բոլոր պարտականություններից, ոչնչացնում պարտքի զգացումն ու հայրենասիրությունը, զրկում սիրուց եւ հավատից դրա փոխարեն երաշխավորելով անկման իրավունքը:*

Ոչ: Սթափվե՛ք: Մահաբեր ծակատագրի կանխասահմանվածության եւ անխուսափելիության մեջ հոգվածությունը սեփական անձի նկատմամբ անտարբերություն ծնող թեթեւմիտ մոլորություն է: Այն հավատի կորուստ է, եւ կամ հակառակը՝ հետեւանքն է անհաստատ, երկմիտ հավատի: Մտավոր կարծատեսություն է այն, որ թույլ չի տալիս հասկանալ, թե կյանքը անվերջ ու անդադրում վերանորոգություն է: Այսպիսի անտարբերությունը պատճառում է հուսալքություն եւ մղում պարտության: Մեզ համար անհնարին կլինի կյանքի պայքարում հաղթելը, եթե մեր երջանիկ ապրելու իրավունքն անտարբերությամբ թողնենք բախտի եւ դեպքերի քմահաճույքին:

Կյանքը պատիժ չէ, եւ ոչ բոլոր գործերն են մեքենայական իրականացումը պարտականությունների՝ վերջին հաշվով գուրկ իրենց իմաստից, իսկ մենք էլ դատապարտված չենք լոկ պարտականություններ կատարելու:

Տեսե՛ք, թե մեզնից յուրաքանչյուրին Աստված որքան բարիքներ է պարգեւել ծրիաբար, եւ մեր ժամանակներում էլ ամեն օր շարունակում է պարգեւել առատորեն, մասնավորապես՝ մարմին ու հոգի, կին ու ամուսին, երեխաներ ու հարազատներ, բարեկամներ ու ընկերներ, էլ չենք խոսում այնպիսի մեծ պարգեւների մասին, ինչպիսիք են խոսքերի խոսքը Ուխտը՝ Աստվածաշունչը, ծառայությունը Ամենաբարձրյալին, որին կարող է մասնակից լինել մեզնից յուրաքանչյուրը, նաեւ հաղորդությունն անմահության խորհրդին: Եվ ի վերջո չէ՞ որ Նրա Որդու բերած փրկությունը մեծագույն պարգեւն է, որ երբեւէ տրվել է մարդկությանը:

Արդ, մեր ո՞ր արարքով, խոսքով կամ գործով մենք արժանացանք այդպիսի մեծամեծ պարգեւների: Եվ ինչո՞ւ ենք մենք այսքան անտարբեր նույնիսկ դրանց նկատմամբ: Օգտվում ենք դրանցից ինչպես որ հարկն է խորհելով, թե այդպես էլ պիտի լիներ, կամ մերժելով դրանք՝ հասնում ենք անտարբերության (ապատիայի) եւ նույնիսկ էլ ավելի վատթարին՝ արհամարհանքին: Բողոքում ենք չհասկանալով մեզ վրա դրված բեռի իմաստը, որի մեջ փորձվում է մեր հավատքը, իսկ այս դեպքում ծանրությունն այլեւս պատիժ չէ, այլ ներում:

Երկրի վրա ապրողներից ոչ ոք ավելի մեծ անտարբերություն եւ արհամարհանք չի կրել, քան Աստծու Որդին, քանզի մինչեւ այսօր Նա շարունակ մեր կողմից արժանանում է նույն անտարբերությանը՝ մեր գործերով, մեր մտածումներով, մեր անհավատությամբ: Նույնիսկ անդունդի եզրին՝ ակնհայտ կործանման շեմին, մենք չուզենք այնքան հոգաքանչություն, որքան Քրիստոսի հետ խաչված ավազակներից մեկը: Քանի դեռ ուշ չէ, ավազակի նման խոստովանենք մեր ներկա իրավիճակի ճշմարտությունը, որովհետեւ «Մենք իրավացիորեն հատուցումն ենք ստանում այն գործերի համար, որ կատարեցինք, իսկ սա որեւէ վատ բան չի արել», սակայն խաչել են Նրան: Մեզ դատապարտելով կործանման:

Անտարբերությունը սեփական անձի, մերձավորի նկատմամբ, բնականաբար, անտարբերություն է հայրենիքի եւ գալիք սերունդների նկատմամբ: Այսօր, անտարբերության ախտով, որ այս կամ այն ձեւով, այս կամ այն չափով է դրսեւորվում, վարակված ենք մենք ամենքս, քանի որ ***«ով որ գիտե, թե ինչ է բարին, եւ չի անում, նրա համար այդ մեղք է»*** *(Հակոբ., Դ, 17): Եվ ով բարին ընդունում է անտարբերությամբ, նույնպես մեղանչում է: Այս հանդիպումը դժբախտության մեջ հատկապես հանգավոր են նրանք, ովքեր մեծ պատասխանություններ են կրում, սակայն ոտնահարել են ժողովրդի վստահությունը եւ մոռացել, որ ամեն ոք պիտի հաշիվ տա Աստծուն՝ իր կատարած բոլոր գործերի համար: Նրանց չի արդարացվի ոչ մի խոսակցություն ծրագրերի, նախագծերի, մտադրությունների մասին, եթե իրական գործեր չլինեն:* ***«Մեզնից յուրաքանչյուրն Աստծուն հաշիվ է տալու իր համար»*** *(Հռոմ., ԺԴ, 12):*

Սիրելիներ, մի՞թե մեր հավատքն այնքան է թուլացել, որ փորձությունները կոտրել են մեզ եւ զզել դժբախտության հորձանուտը, որից այսքան դժվար է դուրս պրծելը: Մենք նմանվել ենք հատուցում պահանջող անթիվ մասերի բաժանված մարմնի: Ունկնդրե՛նք բանականության ձայնը՝ մեղավորներ փնտրելն ամենագլխավոր խնդիրը չէ: Մեղավորներին գտնելն ու պատժելը մեր վիճակի բարելավումը չէ, դրանով մենք պարգասես սատկացնելու ենք մեր վրդովմունքը եւ բարկությամբ մթագնելու մեր ողջախոհությունը: Ինքներս մեզ արդարացնելու պատրվակով՝ չլինի թե ենթարկվենք բոլորին եւ նույնիսկ Աստծուն դատապարտելու գայթակղությանը, որը մեծագույն մեղք է: Կարեւորը. ***«Այն ամենը, ինչ կամենաք, որ մարդիկ ձեզ անեն, այդպես դուք արեք նրանց, որովհետեւ այդ իսկ են Օրենքն ու մարգարեները»*** *(Մատթ., է, 12):*

Եկե՛ք նայենք ոչ թե անցյալին, այլ ապագային, քանի որ այնտեղից ետ նայելով, իբրեւ ապագայի հյուր, մենք նաեւ ներկան կտեսնենք: Դառնանք դեմքով դեպի ապագան, եւ ներկան չի լինի անցյալի վերջը, այլ սկիզբը ապագայի, եւ սկսե՛նք արարել այն հանուն մեր Տեր Աստծու եւ հանուն Նրա Ուխտի, այսօր, հիմա, այս պահին: ***«Այն պատվիրանները, որոնք այսօր ես պատվիրում եմ քեզ, ոչ դժվար են, ոչ էլ՝ քեզ անմատչելի: Դրանք ոչ երկնքում են, որ ասես, թե՝*** «մեզնից ո՞վ կելնի երկինք, որ վերցնի դրանք, որ լսենք եւ կատարենք», ***ոչ էլ՝ ծովի մյուս ափին, որ ասես, թե՝*** «ո՞վ պիտի անցնի ծովի մյուս կողմը, որ մեզ համար վերցնի դրանք, մեզ համար կարդա, եւ մենք կատարենք»***: Քեզ մոտիկ է այդ խոսքը. քո բերանում, քո սրտում է, եւ դու ի վիճակի ես կատարելու այդ»:*** *(Բ Օրենք, Լ, 11-14):*

Այսպիսով, բա՛ց արեք ձեր սրտերը, որպեսզի հալվի անտարբերության սառույցը, եւ նորից կենդանի հավատն աճի, արմատներ գցի ու պտուղներ տա: ***«Ընտրե՛ք կյանքը, որպեսզի ապրեք դուք եւ ձեր սերունդը»*** *(հմմտ. Ղուկ., Լ, 19):*

Հայկ սրկ. Պողոշյան

Տ. ՆԵՐՍԵՍ ԱՐՔ. ՊՈՂՈՍՊԱԼՅԱՆ

ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ

Քարոզ՝ խոսված Մայր տաճարում 2000 թ. հունիսի 11-ին

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:
«Այսօր նոր ժողովուրդք, ցնծացէք ընդ գալուստ Հոգւոյն Սրբոյ, մեծացուցանելով զելոյն ի Հօրէ»:

Սրբազան շարականագիրը Պենտեկոստեի այս օրվա տոնակատարությունը հիշատակելիս հետեւյալ բառերն է ասում. «Այսօր, նորոգված ժողովուրդներ, ցնծացե՛ք Սուրբ Հոգու գալստյամբ՝ բարձրացնելով Հորից ծնվածին՝ Սուրբ Հոգուն»: Այս բառերը ճշմարիտ արտահայտությունն են այսօրվա՝ Հոգեգալստյան տոնի գիտակցության եւ անդրադարձին, որովհետեւ շուրջ քսան դար առաջ Երուսաղեմում՝ վերնատանը, հավաքված Հիսուսի աշակերտները, ըստ իրենց տրված խոստումի, իրենց Վարդապետի համբարձումից հետո սպասում էին Սուրբ Հոգու այցելությանը: Եվ այդ առթիվ Հիսուս նրանց պատգամ էր տված՝ չհեռանալ Երուսաղեմից, չհեռանալ իրենց աղոթքի վայր վերնատնից՝ մինչեւ Սուրբ Հոգու շնորհների ստացումը: Եվ այդպես էլ պատահեց: Համբարձումից տասը օր հետո, երբ Հիսուսի աշակերտները հավաքվել էին վերնատանը՝ կատարելու իրենց ավանդ թողնված սուրբ Հաղորդության խորհուրդը, սարսափելի հողմի նման՝ ահեղագոչ սաստիկ հնչումով երկնքից ձայներ լսեցին, եւ այդ ձայներին որպես պատասխան՝ երկնքից իջան հրեղեն լեզուներ առաքյալների վրա եւ այդպիսով աստվածային առատ շնորհներ պարգեւեցին վերնատանը հավաքված առաքյալներին եւ բոլոր աշակերտներին: Մարդիկ, որ Պենտեկոստեի տոնի առիթով ուխտավորաբար հավաքվել էին Երուսաղեմ քաղաքում, ահեղագոչ հողմի ձայնը լսելով՝ փութով եկան այն վայրը, որտեղից այդ ձայնն էր լսվել: Եվ տեսան այնտեղ գալիլիացի պարզունակ ձկնորսներին, որոնք զարմանալիորեն խոսում էին աշխարհի տարբեր լեզուներով: Եկվոր մարդիկ զարմացան՝ լսելով այդ գալիլիացիների բերանից իրենց ծանոթ լեզուները: Եվ նրանցից ոմանք համարձակվելով ասում էին, թե սրանք նոր գինով են հարբել:

Բնականաբար, մեր կյանքում երբեք չի պատահել, որ հարբած մարդիկ օտար լեզվով խոսեն: Չի՛ պատահել:

Եվ Պետրոսը՝ առաքյալների ավագագույնը եւ տարեցը, ոտքի ելավ եւ նրանց ասաց, թե ո՞վ եւ ինչպե՞ս այս մեծագույն շնորհը բերեց աշխարհ՝ վերնատուն՝ այնտեղ շնորհներ բաշխելով առաքյալներին եւ ներկա բոլոր աշակերտներին: Եվ Պետրոսը հիշեցրեց նրանց, որ Հիսուսից դեռեւս հինգ դար առաջ Հովել մարգարեն մարգարեանալով ասել էր. «Ձեր որդիները երկնային առատ շնորհ են ստանալու, նրանց լեզուները պիտի բացվեն եւ պիտի խոսեն տարբեր-տարբեր լեզուներով, նրանք մարգարեանալու շնորհ են ստանալու, նրանք երազներ եւ տեսիլքներ պիտի տեսնեն: Եվ, իսկապես, Հովել մարգարեի խոսքերն իրականացան: Պենտեկոստեի այդ օրը վերնատանը առաքյալները եւ Հիսուսի բոլոր հետեւորդները երկնային շնորհներով զարդարվեցին: Եվ այդ օրվանից մինչեւ այսօր առաքելական հաջորդականությամբ աստվածային շնորհները բաշխվում են մեր եկեղեցիների խորաններից: Մեր եպիսկոպոսների, վարդապետների, քահանաների միջոցով մեր ժողովրդի վրա աստվածային այդ շնորհներն իջնում են մինչեւ այսօր՝ օժտելով բոլորիս երկնային անսպառ ուժով, եւ զորացնում մեզ մարդասիրության, զոհողության եւ ծառայության առաքինություններով:

Այսօր, սիրելի՛ հավատացյալներ, երբ մեր Եկեղեցին Սուրբ Հոգու գալստյան հիշատակն է տոնում, ես բնականաբար հիշում եմ Ս. Գրիգոր Նարեկացու Սուրբ Հոգուն նվիրված սրտառուչ բանաստեղծության հետեւյալ տողերը. «Եւ հերկեա զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս, որ ձեռնադրես, ուսուցանես, լցուցանես, բարբառեցուցանես համերս.... Շնորհեա եւ ինձ, շնորհեա եւ խոսել համարձակութեամբ կենդանարար Սուրբ Հոգի»:

Տեսնո՞ւմ եք, թե ինչպիսի խոր հասկացողությանը, արժեւորմամբ Սուրբ Հոգու գործն է նրանց հանձնարարված: Ինչպիսի՞ խոր հասկացողությամբ, արժեւորմամբ Սուրբ Հոգու գործն է նրանց հանձնարարված: Ինչպիսի՞ խոր հասկացողությամբ, արժեւորմամբ Սուրբ Հոգու գործն է նրանց հանձնարարված: Ինչպիսի՞ խոր հասկացողությամբ, արժեւորմամբ Սուրբ Հոգու

Գծանկարը՝ Գավրիլ Սերգեեւի, փորագրությունը՝ Ա. Կազաչինսկու (1774-1814 թթ.)

գործն է նրանց հանձնարարված: Ինչպիսի՞ խոր հասկացողությամբ, արժեւորմամբ Սուրբ Հոգու

ԱԼ. ԹԱՄԱՆԱՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԵԼՔԸ

Ալեքսանդր Մյասնիկյանը, 1921 թ. սկզբին նշանակվելով Խորհրդային Հայաստանի ղեկավար, երկրի ավեր տնտեսական կյանքը կարգավորելու եւ զարգացնելու գործին լծվելու հետ միասին, գուցեեւ *առավել հռանդով*, սկսեց զբաղվել հայրենի մշակույթի զարգացմամբ, որ դրանից առաջ էլ համազգային քաղաքականության կարեւորագույն խնդիր էին համարել ժամանակի մշակութային երկու ամենահեղինակավոր գործիչներ Հովհաննես Թումանյանն ու Վահան Տերյանը: *«Առավել հռանդովը»* գուցեեւ չափազանցված թվա: Սակայն մի բան պարզ է եւ հաստատ. նայելով առաջին իսկ ձեռնարկումներին՝ չի կարելի չպնդել, որ Մյասնիկյանը եւս Վահան Տերյանի համոզմանն էր, թե «....նյութական կորուստները միշտ կարելի է վերադարձնել, իսկ հոգեւոր կորուստն անդառնալի է»:

Եվ Մյասնիկյանը հայրենի տուն բերեց աշխարհի տարբեր ծագերում անուն հանած այն մեծերին, որոնք մշակույթի կերտողներ էին՝ գույների վարպետ Մարտիրոս Սարյանից մինչեւ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը եւ շատ ուրիշներ: Նրանք բոլորն էլ արտահայաստանյան հեռուներում ունեին իրենց բարձր անունը, ավելի բարվոք պայմաններում կարող էին շարունակել իրենց գործը եւ նույնիսկ ի շահ հայրենի մշակույթի: Թամանյանը, սակայն, լոկ հայ հողի վրա պիտի քարը քարին դներ, վեր հաներ հայոց հին ճարտարապետության ավանդները, ստեղծեր եւ բանուկ դարձներ դրանցից օգտվելու եւ ավելի առաջ գնալու ճանապարհը: Երեւանի գլխավոր հատակագիծը, հիմք դարձավ հետագա բոլոր հատակագծերի եւ առհասարակ հայոց նոր մայրաքաղաքի շինարարության համար: Կառուցեց մի շարք շենքեր՝ Երեւանի առաջին հիդրոկայանը (1923-26), Երեւանի աստղադիտարանը (1930-35), Բժշկական ինստիտուտի անատոմիկումը (1926-33), մի շարք ինստիտուտների շենքեր, Հանրային գրադարանը (1926-38): Հռչակավոր Կառավարական շենքը, Օպերայի ու բալետի հոյակերտը, որոնք իրենց վրա ունեն հայոց բազմադարյան ճարտարապետության հզոր դրոշմը (հատկապես զարդաքանդակներում), ընդհանրացնում են նրա փորձն ու դասերը, դարձել են այդ ճարտարապետության նոր, առավել բարձր աստիճանը, որն իրավամբ կոչվում է թամանյանական եւ հիմք է դարձել հետագա հզոր վերելքի՝ այնպես շքեղորեն արտացոլված Հանրապետության դարանի եւ բազմաթիվ ուրիշ շենքերի, Երեւանի ու Գյումրիի նոր հրապարակների, փողոցների, բնակելի ու հասարակական անհամար շենքերի ճարտարապետական կերպարներում:



Թամանյանի փորձն ու դասերը, ժառանգությունից օգտվելու անսխալ ճանապարհը, հատկապես Հայաստանի քարն օգտագործելու՝ «խոսեցնելու» անզուգական վարպետությունը շողշողուն ուղեցույց եղան մեծ ուսուցչապետի ժամանակակից շինարարների եւ հետագա սերունդների համար (Մ. Մազմանյան, Գ. Քոչար, Հ. Մարգարյան, Գ. Աղաբաբյան, Ս. Սաֆարյան, Մ. Գրիգորյան եւ շատ ուրիշներ), որոնց շարքում առանձնանում է մեծատաղանդ Ռաֆայել Իսրայելյանի՝ հուշակոթողների անզուգական վարպետի ու Սարդարապատի հզոր հուշահամալիրի հեղինակի պայծառ կերպարը: Երեւի թե այս վարպետի մեծությունն ամենից առաջ Թամանյանի վաստակն ու դերը բծախնդրորեն հասկանալու մեջ է եղել: Տեսեք՝ ինչպե՞ս է բնութագրել ուսուցչապետի կերտած Կառավարական տունը, որ հայոց նոր ճարտարապետության վերելքի ամենահրաշագեղ ապացույցն է: «Կառավարական տո՞ւն,- բացականչել է Իսրայելյանը եւ շարունակել,- որքա՞ն է նա հուզում, փոթորկում հոգիդ, երբ կանգնում ես հայոց լեռնաշխարհի դարպասների կերպարանքն ընդունած այդ շենքի առաջ, որ իր կեցվածքով, ճարտարապետական ձեւերով խոսում, համոզում է, թե ինչքան էլ գա՞ն, ո՛ր հեռավոր երկրից էլ գան, եւ ինչ տեղում էլ ծնված լինեն նրանց պապերը՝ Բիթլիսում թե Թավրիզում, Մուշում թե Էրզրումում, Պոլսում թե Կարսում, բոլորին կընդունի լայն կամարներից կազմված իր հյուրընկալ գրկի մեջ: Ահա թե ի՞նչ է ասում Թամանյանը, ի՞նչ է պատմում Կառավարական շենքի ճարտարապետը: Ու ամեն անգամ, ամեն հանդիպման մի ուրիշ հմայք, ուրիշ թովչանք ունի այդ շենքը. եթե երեկո է, մի ուրիշ տեսակ գեղեցկությամբ է ելնում քո դեմ, քանի որ մայրամուտի արեւի ճառագայթները, ընկնելով այդ ճարտարապետական կառուցվածքի վրա, առավոտվա ձեւերը փոխում են մի այլ հեքիաթի, շենքի քարերը բոցավառվում, դառնում են կրակոտ, կարծես ծածանվում, բոցերի նման կենդանանում, ցնծում, ողջագուրում են մեզ, եւ մենք աչքերով հպվում ենք նրա քանդակուն խաղաղի ողկույզներին՝ շուրթերով զգալով հյութը այդ քանդակների, սրտով զգալով կամարների վեհությունը, բազուկների լարումով՝ սյուների հզորությունը: Իր լայն փռված գոգավոր ճակատով կառույցը դուրս է եկել հրապարակ եւ իր հինգ հաղթական հուժկու կամարները լայն բաց արած, ցանկանում է գրկել բոլորին, հրավիրել իր մոտ: Իսկ քաղաքի ժամացույցի վեր բարձրացած աշտարակն էլ պահապան զինվորի է նման, որին վստահել են հայոց դրոշի պահպանումը»:

Բագրատ Ուլուբաբյան
Պատմ. գիտ. դոկտոր

«ՈՐՏՄ ՄԱՀՆ Է ԳՈՒԺՈՒՄ ԶԱՆԳԸ»

1930 թվականին աշխարհի մեկ վեցերորդ տարածքում պապանձվեցին եկեղեցիների զանգերը՝ հոգեւոր ճեմարանի վաղեմի սան, «Ժողովուրդների հայր» Ստալինի «հրամանաւ»: Դեռ ավելին, ավերվող տաճարների զանգերը գահավիժում էին, ջարդուփշուր լինում ու արձակում վերջին «հոգոցը»: Վկայությունն են բազում նկարահանումները: Ղողանջներն արթնացնում էին խիղճը, հիշեցնում Դատաստանի մասին, որից սարսափում էին հատկապես բռնակալները: Եվ տարիների այդ լռությունը պայթեց, պատերազմի թեժ պահին թնդանոթների որոտը հանկարծ ճեղքեցին եկեղեցական զանգերը՝ վեր խոյացավ Արամ Խաչատրյանի «Զանգով սիմֆոնիան» (1943 թ.): Սիմֆոնիայի ղողանջները տարածվեցին պաշարված Լենինգրադի երկնակամարում, այնուհետեւ՝ Մոսկվայում: Զանգեր կան նաեւ Պրոկոֆեւի «Սեմյոն Կոտկո» օպերայում (1940 թ.), սակայն Խաչատրյանի զանգերը տիեզերահուչ են սիմֆոնիայի սկզբում հնչում են իբրեւ «Նաբատ», գուժում պատերազմը, իսկ վերջում՝ միաձուլվում հաղթող ժողովրդի ցնծությանը: Հնում «Նաբատը» մեծ թմբուկ էր, որի դղրդյունով սկսում էին գրոհը ու վախ ներշնչում թշնամուն: Ճիշտ է, Խաչատրյանի «Նաբատի» անմիջական թիրախը ֆաշիզմն էր, սակայն այն մի ընդհանրություն է առհասարակ չարի դեմ: Ուստի սիմֆոնիան իր զորությամբ վախեցնում էր նաեւ կուսակցության գաղափարախոսներին: Խաչատրյանն էլ Բեթհովենի պես կարող էր ասել. «Եթե բազմավարությունը տիրապետեի ինչպես երաժշտությունը, ես կջախջախեի ձեզ...»:

Եթե գաղափարախոսները միջամտում էին ու արհամարհանքով խոսում, օրինակ, սաքսոֆոն նվագարանի մասին, որակում այն իբրեւ բուրժուական, ապա զանգերը Համլետի «թակարդի» պես էին ազդում ոճրագործ ղեկավարների վրա. նրանց հիշեցնում էին իրենց հանցանքները: Պատահական չէ, որ 1948-ին կուսակցության հայտնի որոշմամբ արգելվեցին Խաչատրյանի, Պրոկոֆեւի, Շոստակովիչի ստեղծագործությունների կատարումը, նրանց նոր գործերի հրապարակումը: Մասնավորապես արգելել էին Խաչատրյանի 3-րդ սիմֆոնիան (1947 թ.): Եթե բիբլիական մի քանի շեփորի համազարկից փլուզվեցին մեղքի մեջ թաղված Երիքով քաղաքի պատերը, ապա 3-րդ սիմֆոնիայի 15 շեփորը վտանգ էր սպառնում Կրեմլի պատերին... Սակայն շուտով ինքը՝ բռնակալը լռեց, խաչատրյանական զանգերը գուժում էին նաեւ զանգերի թշնամու մահը... Հիշյալ սիմֆոնիան

> **Երբ**
> **բեթբեհեմյան մի փոքր**
> **շեփորի համապարկից**
> **ցնցվեցին մեղքի**
> **մեջ թաղված Երիքովի**
> **փողափի պարիսպը, ապա**
> **3-րդ սիմֆոնիայի 15**
> **շեփորը վտանգ էր**
> **սպառնում Կրեմլի**
> **պարիսպներին...**

«Զանգով» է կոչել երաժշտագետ Գ. Խուբովը: Մեծակերտ սիմֆոնիայի չորս մասերի ընթացքում մեկը մյուսին հաջորդում են ցնցող կերպարներ եւ հոգեվիճակներ՝ ողբը, պայքարը, կորսված երջանկությունը, «մահվան պարը», տոնական շեփորները: Երեք զանգերի վերընթաց դարձվածքը անդրադառնում է ջութակներում եւ մյուս նվագարաններում, ինչպես հեռավոր արձագանք լեռներում՝ հիշեցնելով «մեր երկիրն ավեր, մեր զանգերը լալագին» (Տերյան): Եկեղեցու զանգերի ձայնը եւ մոր ձայնը Արամի մանկական առաջին տպավորություններն էին, ինչյունային տիեզերքի վեմերը: Մոր երգած «Որսկան ախպեր» երգի հնչյուններով էլ Խաչատրյանը կերտել է հանուն հայրենիքի ճահատակված զինվորի մոր, ինչպես ինքն է ասել, «պատերազմի ամենաողբերգական զոհի կերպարը»: Հիշյալ երգի մեղեդին սիմֆոնիայի 3-րդ մասում միահյուսվում է ահեղ դատաստանը հիշեցնող «Dies irae» գրիգորյան խորալի հետ, որն ըստ Խուբովի՝ ունի արեւելյան ծագում: («Ինտերնացիոնալիզմի» պայմաններում երաժշտագետը չէր կամեցել ընդգծել «Dies irae»-ի հայկական ծագումը, բայց ավելի ուշ պրոֆեսորներ Վ. Կոնենը, Տ. Լիվանովան խոսեցին հռոմեական եկեղեցական երգեցողության վրա հայկական պատարագի ազդեցության մասին: Մինչդեռ Մոսկվայում հրատարակած 2-րդ սիմֆոնիայի պարտիտուրի ներածականում Լ. Սուերբախը Խաչատրյանի երաժշտական ակունքների մասին գրելիս հայկական կողքին փակագծերում անպայման ավելացնում էր ադրբեջանականն ու վրացականը):

Մոլեգնող աթեիզմի տարիներին մեծ համարձակություն էր պահանջվում եկեղեցական երաժշտության արգելված խորհրդանիշերին դիմելը...

Ինչպես մի եկեղեցու զանգերի ձայնը հասնում է մյուս եկեղեցուն ու անդրադառնում, այնպես էլ Խաչատրյանական զանգերին ապագայում ձայնակցեցին Ավետ Տերտերյանը՝ իր սիմֆոնիաներով, Յու. Սվիրիդովը՝ «Սերգեյ Եսենինի հիշատակին նվիրված պոեմով», ուրիշները նույնպես: Եվ հարատեւում է ժամանակների փոխակնչը, չեն մարում Գլինկայի «Իվան Սուսանին», Ռիմսկի-Կորսակովի «Հեքիաթ Սալտան թագավորի մասին» օպերաներում հնչող եկեղեցական զանգերը: Բիրտ ուժերն ի զորու չեղան լռեցնելու նաեւ Ս. Խաչատրյանի սիմֆոնիայի դողանջները: Այսօր էլ այն հնչում է ու կհնչի իբրեւ «անլռելի զանգակատուն»...

Դանիել Երաժիշտ

Հակիրճության երկրին է երկրի վրա: Երկրին, որ այն զանգվածն է, որ չափազանց մաքուր ոչխարին թ պատրաստման:

ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ



«Սիրո մոլորակն» իր ամառային պտույտը շարունակում է Հայաստանի գողտրիկ վայրերում:

Աշտարակ. գյուղ Սաղմոսավան: Քասախի կիրճի զարմանահրաշ, անձեռակերտ բնության զարդը ֆորեզրին խոյացող Սաղմոսավանքն է՝ աղոթասերների ամենանվիրական ուխտավայրերից մեկը:

Այս խնկաբույր աղոթատունը կառուցվել է 1215 թվականին: Միջնադարում այն եղել է գործուն վանական համալիր՝ բաղկացած չորս առանձին կառույցից. դրանք էին՝ Ս. Սիոն եկեղեցին, գավիթը, գրատունը եւ Ս. Աստվածածին եկեղեցին: Ս. Սիոն եկեղեցին եւ գավիթը կառուցել է իշխան Վաչե Վաչուտյանը 1215-1235 թվականներին, իսկ Ս. Աստվածածին եկեղեցին եւ գրատունը 1255 թվին կառուցել է իշխան Քուրդ Վաչուտյանը: Այս գեղակերտ համալիրն անվանվել է Սաղմոսավանք, քանի որ այստեղ ծառայող կրոնավորներն ու այցելող աշխարհականները երկինք առաքվող իրենց հոգու խոսքն արտահայտում էին հիմնականում սաղմոսների միջոցով: Իսկ սաղմոսը, ինչպես եւ աղոթքը, Տիրոջ հետ հաղորդակցվելու ամենամտերմիկ խոսքն է:

«ՍԻՐՈ ՄՈԼՈՐԱԿԻ» ՀԱՐՑԸ

Ո՞վ կարող է լինել քո ընկերը, ո՞ւմ հետ ես ընկերություն անում:
Պատասխանել են Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Մանրանկարչության արվեստի կենտրոնի սաները:

Իմ ընկերուհին շատ գեղեցիկ, համակրելի, համեստ եւ կիրթ աղջիկ է: Ես նրա հետ եմ ընկերություն անում եւ նրան եմ իմ գաղտնիքները վստահում, որովհետեւ նա գաղտնապահ է եւ անկեղծ: Նա ինձ հավատում ու հարգում է, միշտ հետաքրքրությամբ լսում է, երբ իրեն ինչ-որ բան եմ պատմում, եւ կարիքի դեպքում օգտակար խորհուրդներ է տալիս: Երկար ժամանակ նրա կողքին լինելով՝ ես ինձ շատ լավ ու երջանիկ եմ զգում. չէ՞ որ այսպիսի հրաշալի ընկերուհի ունեմ:

Միրանուշ Մուրադյան (14 տ.)

Իմ ընկերը իմ եղբայրն է. նա ինձ համար եւ՛ եղբայր է, եւ՛ ընկեր: Միայն նրան եմ վստահում, որովհետեւ ինձ օգնում է իր խորհուրդներով: Զայրանում է վատ արարքիս համար ու ճիշտ ուղղություն դպիս: Երբ բարկացած եմ լինում, իր բարի խոսքով օգնում է ինձ հաղթահարելու այդ վիճակը: Մեր օգնությունը փոխադարձ է: Ես շատ եմ սիրում իմ եղբորը, որ միաժամանակ իմ հարազատ ընկերն է:

Քնարիկ Մարգսյան (15 տ.)

Ես ունեմ շատ ընկերներ: Բայց ամենից շատ ինձ մտերիմ ու հարազատ է մի աղջիկ: Ես նրան վստահում եմ, դրա համար էլ ընտրել եմ որպես ընկեր: Նա շատ անգամ է օգնել ինձ դուրս գալու դժվար դրությունից: Ես վստահ եմ, որ նա երբեք ինձ չի դավաճանի:

Հայկուհի Միհասյան (12 տ.)

ՀՈԳՈՒ ԽՈՍՔ

Ուխտը սիրո նշան է, զոհողության տեսակ, երախտիքի արտահայտում: Երբ որեւէ մեկը մեզ համար մի բարի գործ է կատարում, նրա նկատմամբ երախտիքի զգացումով ենք լցվում ու ամեն կերպ փորձում վարձահատույց լինել: Ուզում ենք վերադարձնել նրա բարության կրկնապատիկը, եռապատիկը: Եթե մարդ արարածի նկատմամբ այսքան մեծ է այս զգացումը, ապա որքան առավել պիտի այն լինի մեր Տեր Աստծու հանդեպ, որը մշտապես օգնում ու բարիք է բաշխում բոլորիս:

Երբ որեւէ նպատակի իրականացման համար խնդրում ենք Աստծու հովանավորությունը, եւ այդ նպատակն իրագործվում է, տեսնում ենք, որ «բախել ենք, եւ բացվել է, խնդրել ենք, եւ տրվել է»: Իսկ մեր շնորհակալությունն ու երախտագիտությունն Աստծուն հայտնում ենք աղոթքով, մոմավառությամբ, մատաղ կատարելով, ուխտագնացությամբ: Բայց այս ամենը շատ թույլ ու տկար կլիներ առանց սիրո ու հավատի: Սիրելով, հավատալով, բարիք գործելով ու հոգում փայփայած ուխտը՝ խոստումն, կատարելով ենք վարձահատույց լինում Աստծուն:

Աննա Ղազարյան

ԱՌԱՎՈՏ

Վաղորդյան հովի զով շունչն է փչում
Գիշերվա քնից բմբած երեսիս,
Ցուրտ է ու քամի մի թեթեւակի,
Բայց ես չեմ մրսում:
Թեթեւ է հոգիս, ճախրում եմ օդում.
Արշալույսի մեջ նոր բացվող արփին
Բազում շողերով ինձ է ողջունում,
Ու ես էլ, նրա ողջույնն առնելով,
Առաջ եմ գնում ու վեր խոյանում,
Հասնում ամպերին,
Նրանց մոռայլված խոնավ շուրթերից
Մի համբույր քաղում
Ու նորից՝ դեպ վեր:
Լուսնին եմ հասնում,
Ժպտում է նա ինձ,
Եվ արծաթագույն սառած ժպիտի
Բյուր-բյուր ծալքերում
Տեսնում եմ ես ջերմ մի անդրադարձում...
Եվ առավոտ է, ու ես չեմ դիմում.
Ամեն ինչ նոր ու թարմ է ինձ թվում:

Գոռ Նազարյան (16 տ.)

ԿՈՒԿԱՐԱՁ

Արման Միրզախանյանը նկարել սկսել է 5 տարեկանից: Հետո հաճախել է նկարչական դպրոց: Շատ է սիրում նկարել նատյուրմորտներ, բայց առավելապես նկարում է հոգեւոր թեմաներով: Սիրած գույներն են կարմիրն ու կանաչը: Անչափ շատ է սիրում Մարտիրոս Սարյանի նկարները: Օրինակ է վերցնում նաեւ իրեն ծանոթ վաղարշապատցի նկարիչներից:

Բացի մեծ նկարիչ դառնալու երազանքից, Արմանը մեկ այլ փափագ էլ ունի՝ քահանա դառնալ: Ու որպեսզի արժանի լինի այդ կոչմանը, արդեն իսկ կատարում է հոգեւոր ծառայություն Վաղարշապատի Սուրբ Աստվածածին եկեղեցում՝ որպես դպիր: Աշխատում է անել ամեն ինչ՝ հոգում եկեղեցու. օգնում է ավագ հոգեւորականներին, բարեպաշտական կանոններն է բացատրում եկեղեցի հաճախող իր հասակակիցներին:

Մեր պատանի դպիրը շատ հայրենասեր է: Հայրենիքն ու հավատքը, ըստ նրա, անբաժանելի են, քանի որ հայրենիք ասելով՝ հասկանում է մի տուն, ուր ապրում են հայերը, եւ սուրբ վայր, որ արժանացել է Հիսուս Քրիստոսի էջքին:

Տրդատ արքան եւ Ս. Հռիփսիմեն
Արման Միրզախանյան (13 տ.)

ՓՈՍՏԱՐԿՂ

Գր. Լուսավորիչը
Խոր Վիրապում

«Սիրո մոլորակին» ողջունել է Սամվել Գրիգորյանը: Մեր «մոլորակի» ուղեկիցները նրան ծանոթ են «Բարի գործ» խորագրից: Այս անգամ Սամվելը որոշ մանրամասներ է պատմել իր մասին: Սովորում է Արմավիրի մասներ է պատմել իր մասին: Սովորում է Արմավիրի թիվ 1 միջն. դպրոցում: Գերազանց գնահատականներով ավարտել է 4-րդ դասարանը: Սովորում է նաեւ նկարչական դպրոցում. փոխադրվել է 3-րդ դասարան: Նկարել շատ է սիրում: Մասնակցել է տարբեր ցուցահանդեսների: ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակի կողմից արժանացել է դիպլոմի: Իսկ «Երեխաներն ընդդեմ ծխելու» միջազգային մրցույթում հաղթող է ճանաչվել մարզային փուլում, եւ նրա նկարը ցուցադրվել է հանրապետական պատկերահանդեսում:

Դասերից ու բոլոր պարտավորություններից ազատ ժամանակ Սամվելը սիրում է խաչբառ կազմել: Դրանցից մեկը կառաջարկենք լուծել «Սիրո մոլորակի» հաջորդ պտույտին:

Փրկություն

ՀԱՆԵԼՈՒԿ

Իմ գլուխը Քրիստոս Տերն է,
Հիմքս էլ Սուրբ Պետրոս վեմն է:

(վեղեկիդ)



Ուիսրի
նշանն եմ Աստծո,
Հայրենիքում եմ անշրեւից հեւոր:

(ցոջովզ)

Եթե ուզում ես պատասխանը գտնել,
Երեք մրգի անուն պիտի հիշես:
Ծանոթ են նրանք քեզ. թե լինեն կուրես,
Միայն թե պետք է Քանանը հետախուզել:

(Դաշ ՝տաց ՝նսնոՀ)

Տաթեւիկ Մարգարյան
Ք. Գյումրի

Այն ո՞վ է, ո՞վ.
Որ ծնվեց խոտերի մեջ,
Ու գառներն էին նրա շուրջը:
Այն ո՞վ է, ո՞վ՝ մեզ
պաշտպանում,
Մեր շուրջն է միշտ,
Մեզ հետ է նա.
Կարո՞ղ եք ասել՝ ո՞վ է:

(ոստովմՃ ոտսովՇ)

Քրիստինե Գեւորգյան
(4-րդ դաս.)
Ք. Երեւան, «Էլիտա» հեռնակային դպ.

Հանելուկ

Էջի խմբագիր՝ Աննա ԱԼՈՅԱՆ

ՎԼԱԴԻՄԻՐ ՍՈԼՈՎՅՈՎ

ԱՇԽԱՐՀԻ ԻՄԱՍՏԸ

(Ավետարան՝ ըստ Հովհաննու, Ա, 1-3)

Համաշխարհային շարիքի էությունը բոլոր էակների օտարացման եւ անմիաբանության, նրանց փոխադարձ անհամաձայնության եւ անհամատեղելիության մեջ է: Բայց դրանում է կայանում եւ աշխարհի անփմատ (իռացիոնալ) կեցությունը: Մենք անփմատ ենք անվանում այն ամենը, ինչը չի կապվում եւ չի համեմատվում ոչնչի հետ, ինչը հակասում է ամեն ինչին եւ ոչ մի բանի հետ համատեղելի չէ: Այսպիսով՝ շարը եւ անիմաստը, ըստ էության, նույն բանն են: Յուրաքանչյուրի էգոիզմը եւ բոլորի անմիաբանությունը՝ այն ինչ ներսից է, (կամքի համար) շարիք է հանդիսանում, այդ նույնը արտաքինում (մտքի համար կամ պատկերացման մեջ) հանդիսանում է անիմաստություն: Այստեղից էլ մեր գործնական խնդիրը՝ արտաքին միջավայրը դարձնել թափանցելի մեր կամքի համար կամ հնազանդ մեզ, եւ մեր թեորետիկ խնդիրն այդ նույն միջավայրը դարձնել թափանցիկ մեր մտքի համար, մեզ համար պարզ կամ հասկանալի. այս երկուսն էլ կազմում են միեւնույն խնդիրը: Այն կատարելու համար առաջին հերթին մենք ինքներս պետք է դառնանք լուսավոր եւ թափանցիկ ամեն բանի համար: Այլապես կլինի միայն արտաքինն ու բոնին, շար եւ անիմաստ ենթարկումը: Եվ եթե բոլորի շար անմիաբանությունը հանդիսանում է աշխարհում իմաստի բացակայությունը, ուրեմն աշխարհի իմաստը կայացած կլինի հակադիր բանում, այսինքն՝ համընդհանուր հաշտության եւ միաբանության մեջ: Աշխարհ կամ տիեզերք նշանակում է հենց համաձայնություն եւ միաբանություն: «Աշխարհ» բառի իմաստի մեջ ամփոփված է եւ իր աշխարհի իմաստը: Եվ այդ իմաստը չի հանդիսանում մեր կամայական պահանջը կամ սուբյեկտիվ իդեալը, այլ բացվում է մեզ (չնայած ոչ լրիվ)՝ որպես իրականություն: Չնայած աշխարհի կյանքի հիմքում ընկած է բոլորի անհամաձայնությունն ու անմիաբանությունը՝ քաոսը, չնայած բոլոր էակներն ու ուժերը շար եւ անիմաստ ցգտման մեջ հակամարտում եւ բախվում են միմյանց, ներողում եւ հալածում միմյանց, բայց եւ այնպես հակառակ նրանց կամքի, հակառակ համընդհանուր բաժանման եւ ներհակության՝ աշխարհը կա եւ ապրում է՝ ինչպես ինչ-որ միասնականություն եւ համաձայնություն: Անմիաբանության եւ քաոսի հիմքի վրա անտեսանելի ուժը դուրս է բերում համընդհանուր կեցության լուսավոր թելերը եւ փոխակերպում է Տիեզերքի տարանջատված գծերը ներդաշնակ կերպարների: Աշխարհը դատարկ քաոս չէ, կա աշխարհում իմաստ, եւ դա ամենուր երեւում է եւ իր համար ճանապարհ է հարթում:

Հակառակ սեփական էգոիզմի՝ ոչ մի էակ չի կարող դիմակայել իր առանձնության մեջ. անհաղթահարելի ուժը ցգում է նրան դեպի մեկ ուրիշը եւ միայն «բոլորի» հետ կապով է նա գտնում իր իմաստը եւ իր ճշմարտությունը: Այդ համընդհանուր իմաստը, որ հանդիսանում է այն, ինչ ճշմարիտ է, առաջին հերթին երեւում է տիեզերական ցգողականության օրենքի մեջ, որը ստեղծում է աշխարհի նյութական համերաշխությունը: Որքանով յուրաքանչյուրի իրական կեցությունը հակասում է ուրիշին, այնքանով նրա իմաստը հանդիսանում է ընթացքը կամ ցգտումը դեպի ուրիշը եւ այդ ցգտումը, հակառակ համաշխարհային անմիաբանության (որը հատուկ է յուրաքանչյուրին), կապում է բոլորին միասին եւ ցույց է տալիս, որ աշխարհի իմաստ է հանդիսանում ամբողջի միասնությունը: Էակները նահանջում են այդ իմաստից՝ հաստատելով իրենց առանձնաբար, բայց հեռանալ դրանից նրանք չեն կարող, քանզի դա իրենց կեցության իմաստն է: Նրանք կարող էին միայն փորձել ինքնահաստատվել ուրիշներից առանձին: Այդ ձիգի մեջ նրանք դառնում են գործող ուժ, իսկ միասնությունը, որը կազմում է նրանց իմաստը, հայտնաբերվում է նրանց մեջ՝ որպես այլ ուժ, որպես արտաքին անհրաժեշտություն կամ ընդհանուր օրենք:

Այսպիսով, մի կողմից էգոիզմը՝ որպես փորձ՝ առանձնանալու եւ տիրանալու կյանքին՝ բացառապես սեփական անձի համար (այստեղից էլ՝ բոլորի անմիաբանությունը, համաշխարհային շարիքը, իավարը, քաոսը եւ անիմաստությունը), իսկ մյուս կողմից՝ միավորող ուժի ակամա ցգտումը, շնորհիվ որի յուրաքանչյուրը վերաբերում է բոլորին եւ այդ հարաբերությամբ գտնում իր իմաստը:

Այդ իմաստը, որպես իրական ճշմարտություն, հակագրում է համաշխարհային անիմաստությունը: Համընդհանուր քաոսի մեջ դրված, ինչպես ծածուկ ուժ, նա ցգտում է հայտնաբերվելու, ցանկանում է դուրս գալ նյութական իավարից, պաքարում է անմիաբանության թշնամի սկզբունքի դեմ եւ ատրճանաբար հաղթահարում է այն: Ազատելով աշխարհի տառապող բնությունը (համաշխարհային հոգին) շար անմիաբանության իշխանությունից, այդ միավորիչ իմաստը տիրում է նրան եւ ծնվում նրանից տարբեր կերպարանքներով: Ձգողականության ուժից հետո, որը բոլորին միմյանց է ցգում եւ կազմավորում Տիեզերքից մեկ մեծ մարմին, հետեւում են տաքության, լույսի եւ հոսանքի ֆիզիկական ուժերը, որոնց մեջ համաշխարհային մարմնի մասերը դառնում են տարբեր ատրճանի մատչելի եւ մեկը մյուսի համար թափանցելի: Հետո հետեւում է քիմիական իմամակցության ուժը, որը համաշխարհային մարմնի տարրերը դնում է միմյանց միջեւ՝ համապատասխան զուգակցման մեջ: Այնուհետեւ հետեւում է ներդաշնակ կերտվածքի ուժը, որը տարատեսակ նյութերը տանում է դեպի կենդանի օրգանիզմի միություն: Եվ վերջապես, այդ օրգանիզմներում հայտնաբերվում է ցեղային ուժը, որը հաղթահարում է անհատների առանձնացումը: Միության գործուն ճշմարտությունն ամենուր հասնում եւ կապում է անմիաբանության կեղծ ցգտումներին եւ նույնիսկ ծայրահեղ էգոիզմի երեւույթներում ցույց է տալիս էգոիզմին հակառակ իմաստ: Այդ իմաստը երեւում է նույնիսկ էակների փոխադարձ ոչնչացման մեջ, երբ յուրաքանչյուր էակ ցանկանում է կուլ տալ մյուսներին եւ իրոք կուլ է տալիս, սնվում է նրանցով: Առանց դրա նա չի կարող ապրել: Նշանակում է, նա չի կարող դիմանալ իր առանձնության մեջ, որպեսզի լինի այդպիսին, նա պետք է սնվի ուրիշներով եւ նրա այդ մշտական կամ կատումը ուրիշից լցնում է նրա ողջ էությունը՝ նա ապրում է ուրիշով:

Էակների անջատ-անջատ, անիմաստ կեցությունը նրանց միայն կեղծ վիճակն է, երեւութական եւ անցողիկ: Նրանց ճշմարիտ կեցությունը կայանում է բոլորի եւ ամեն ինչի հետ միության մեջ: Կեցության առանձնությունը պայմանում է ոչ թե առանձին մասերին, այլ ամբողջին: Ամեն տեսակ կեցության անվերապահ սկիզբը եւ աղբյուրը դա բոլոր գոյերի բացարձակ ամբողջությունն է՝ այսինքն Աստված: Այդ ամբողջությունը, որ ինքն իրեն մնում է հավիտենականության անփոփոխ հանգստի մեջ, բացահայտվում եւ արտահայտվում է աշխարհի միավորող իմաստի մեջ, այնպես որ այդ իմաստը հանդիսանում է անմիջական արտահայտությունը կամ Աստվածության Խոսքը. դա բացահայտ եւ գործող Աստված է:

Նրանով է բնորոշվում ամեն տեսակ իրական կեցությունը՝ սկսած նյութի մանրագույն մասնիկից, որը ցգտում է մյուս մասնիկներին, մինչեւ կենդանիների բարդ տեսակները, որոնք կուլ են տալիս մյուս օրգանիզմները կամ միավորվում իրենց նմանների ցեղի մեջ: Ամենուր արտահայտվում եւ գործում է կեցության հավերժական իմաստը՝ անսկիզբն Աստծու նախասկզբնական Խոսքը: Այդ Խոսքը արգելում է ամեն տեսակ առանձին, անկապ գոյություն, անքակտելի կապերով միավորում է մեկը մյուսին եւ յուրաքանչյուրին բոլորի հետ, քառասային բազմազանությունից կազմում է միավորյալ աշխարհ: Սկզբից էր Բանը եւ Բանը Աստծու մոտ էր եւ Բանը Աստված էր: Ամեն ինչ Նրանով եղավ եւ առանց Նրա չեղավ ոչինչ, որ եղել է:

Թարգմ՝ Ա. Ա.

ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գեւորգյան հոգեւոր ճեմարանի ամավերջի հանդիսությունը Մայր Աթոռ Սբ. Էջմիածնում

Հունիսի 26-ին Գեւորգյան հոգեւոր ճեմարանի դահլիճում տեղի ունեցավ ճեմարանի 1999-2000 թթ. ուսումնական տարվա փակման հանդիսավոր արարողությունը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Ամենայն Հայոց Գարեգին Բ կաթողիկոսի նախագահությամբ:

Ուսումնական այս տարում, ինչպես հաշվետու զեկույցում նշեց ճեմարանի տեսչի պաշտոնակատար Տ. Բարկեն արդ. Սալբիյանը, հոգեւոր բարձրագույն կրթություն էր ստանում 107 ուսանող, որից 22-ն ավարատեց վերջին՝ 6-րդ լսարանը՝ համալրելով Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի միաբանության շարքերը: Նրանց մի մասը հաճնեցել է նաեւ սարկավագության քննությունները:

Վեհափառ Հայրապետը, որ իբրեւ Ամենայն Հայոց կաթողիկոս՝ առաջին տարին էր ներկա գտնվում ճեմարանի ամավերջի հանդեսին, իր գնահատանքը հայտնեց տեսչությանը եւ դասախոսական կազմին՝ նշելով, որ այսուհետ իր առավել գործուն մասնակցությունն է բերելու ճեմարանական կյանքին: Իր օրհնությունը տալով ճեմարանի սաներին՝ Նորին Սրբությունը պատգամեց նրանց լինել ճշմարիտ հոգեւորական, Քրիստոսի խոսքի համաձայն՝ դառնալ աշխարհի լույսն ու աղը, ինչի համար անհրաժեշտ են գիտելիք, գիտակցված հավատք, աղոթասիրություն, խոնարհություն ու գթասրտություն:

Հանդիսությանը ներկա էր Երուսաղեմի հայոց պատրիարք ամենապատիվ Տ. Թորգոմ արք. Մանուկյանը: Նա նույնպես ողջունեց ճեմարանականներին՝ հույս հայտնելով, որ նրանք հետամուտ կլինեն այն հեռավոր նպատակին, որ ծառայություն է Հայ եկեղեցուն ու ժողովրդին:

Ավանդույթի համաձայն՝ ճեմարանի լավագույն ուսանողներին հանդիսության ընթացքում հանձնվեցին խրախուսական մրցանակներ ու դրամական պարգեւներ՝ ուսման մեջ ցուցաբերած առաջադիմության եւ օրինակելի վարքի համար:

Հայ եկեղեցու գանձերը՝ Սանկտ Պետերբուրգում

Հունիսի 22-ին Սանկտ Պետերբուրգում՝ Էրմիտաժի Ձմեռային պալատի Ալեքսանդրովյան սրահում, բացվեց «Հայ եկեղեցու գանձերը» ցուցահանդեսը՝ նվիրված Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700 եւ Սանկտ Պետերբուրգի Սբ. Կատերինա հայկական եկեղեցու 290-ամյակին:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածինը ներկայացնում է Հայ Առաքելական եկեղեցուն եւ համայն քրիստոնեությանը հոգեհարազատ սրբություններ, ինչպես նաեւ Հայ եկեղեցում գործածվող ծիսապաշտամունքային նշանակություն ունեցող առարկաներ՝ հայկական արծաթագործության, ասեղնագործության գլուխգործոցներ:

Մայր Աթոռի կողմից ներկայացված շուրջ 70 ցուցանմուշների կողքին պետերբուրգյան ցուցահանդեսում ներկայացվեց նաեւ Հայ եկեղեցուն առնչվող այլ մասունքներ Էրմիտաժից՝ Սկեւրայի մասնատուփը եւ 2 հուշաքար:

Ցուցահանդեսը կշարունակվի մինչեւ օգոստոսի 27-ը:

Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տեղեկատվության համակարգ

ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՀԱՅԱՍՏԱՆ
Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ
Հիմնադիր՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
Հրատարակիչ՝ Ս. Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Գրանցման վկայական՝ 624, **Դասիչ՝** 69333
Գլխավոր խմբագիր՝ Աստղիկ Ստամբոլցյան
Խմբագրության հասցեն՝ ք. Վաղարշապատ, Ս. Գայանե եկեղեցի, Քրիստոնեական դաստիարակության եւ քարոզչության կենտրոն
Հեռախոս՝ **(0+59) 56780**
Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարան
Ստորագր. է տպագր. 1. 7. 2000 թ. **Տպաք.՝ 2500** **Գինը՝ 50 դրամ**